

դուժեամբ գլխանոցներ հիւսելը եւ ձեւաւորելը որոշ չափով մը կատարելութեան հասաւ» :

«Սակայն ներկելը անոնց (Թունուղցիներուն) կարողութենէն վեր բան մըն էր, եւ Թրքական կառավարութիւնը անհամբեր վաւերացրանելու համար Էօմէր Էֆէնտի ձեռնարկը, Թունուղցիներու երկրորդ խումբ մը բերաւ, առանց նախորդէն աւելի յաջողելու, թէեւ անոնք իրենց երկրին ամէնէն ճարտար արհեստաւորներէն առնուած էին : Գլխանոցները որքան որ կը հաւասարէին Թունուղցիներու արտադրութեան իրենց ձեւով եւ հիւսուածքով, սակայն գոյնով աղօտ էին եւ դէշ կերպով ներկուած, ու արարները կը յայտարարէին թէ ներկելու անյաջողութիւնը արգիւնք էր Կ. Պոլսոյ եւ չըմակայքի ջուրին, որ անյարմար էր ներկելու համար» :

Իբր վերջին յոյս փորձ մըն ալ կատարուեցաւ, սակայն այդ ալ անցաւ անյաջող, եւ այս արտադրութեան տեղականացման փորձը լքուելու մօտ էր, երբ Էօմէր Էֆէնտի կասկածելով արար արհեստաւորներէն, Անկիւրիացի ճարպիկ հայ մը, Յովանէս աղա (Avanis aga) կոչուած, իրը թուրք ծպտելով ներկասրահին մէջ գործաւոր ըրաւ : Յովանէս աղա լաւ քիմիագէտ մ'ըլլալով, ինչպէս նաեւ աշակուրջ դիտող մը, ամէն կասկած փարատող միամտութիւն մը ցոյց տալով, չուտով տիրացաւ իր տէրը մտադրադ ընող գաղտնիքին, որմէ վերջ լքեց իրը Թունուղցիներու ծառայ իր աննշան երեւոյթը : Թունուղցիները կամ իրենց իշխանէն ստացած գաղտնի հրամանով եւ կամ ծայրայեղ հայրենասիրութենէ մղուած, իրենց ժամանումէն ի վեր կը պահէին (ներկարարութեան գաղտնիքը), ինքը՝ հայը՝ ծածուկէն գործի սկըսաւ, ներկարանին ջուրով իսկ երկու գլխանոց ներկեց, ու չորցնելէ վերջ Էօմէր Էֆէնտիի նուիրեց, որ բուն թունուղականէն չկրցաւ զանաղանել» :

«Իր ձեռնարկին յաջողութենէն ուրախացած, Էօմէր Էֆէնտի տարները կանչեց իր ներկայութեան ու ցոյց տուաւ Փէսը. երբ անոնք մատնուիւնին տեսան, իսկոյն իրենց թիւրպէները գետին նետեցին, փետեցին մազերնին եւ հայուն դարձած՝ Եազուպ, Եազուպ, աղաղակեցին միաբերան» :

«Վարիչը արարներուն Կ. Պոլիս մնացած ժամանակին համար լիուլի վարձատրելէն վերջ գործէ զրկելով զիրենք Թունուղ վերադարձուց, մինչ Յովանէս աղա էյուպի արքունի գործարանին գլխաւոր ներկարարը ընտրուեցաւ, եւ այժմ կը վայելէ բարձր պատիւը ընտրելու այն իսկական գոյնը՝ որ պիտի հագնի Մահմուտ Ութեղն (Թուրքիոյ Սուլթան Մահմուտ Բ Ատիլ, 1808-1839), Արեւու Լոյս եւ Տիեզերքի Ստուեր»⁽²³⁾ :

Պատմութենէն անցնելով արհեստին՝ պէտք է ըսել որ ներկարար-

(23) The Beauties of the Bosphorous. — London, p. 10-11.